*Հաստատված է*
*«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետի*
*2011թ. հունիսի 6-ի թիվ 153-Լ հրամանով*

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
պետական ոչ առևտրային կազմակերպություն

# Հ Ր Ա Վ Ե Ր

Գնումների աջակցման կենտրոնի կողմից
Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող արհեստական կառույցների պահպանման և շահագործման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի

*Հարգելի մասնակից*

*Նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Գնումների աջակցման կենտրոնի կողմից ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող արհեստական կառույցների պահպանման և շահագործման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված հայտարարված շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերի

ՄԱՍ I


1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հրավերի (հրավերի՝ ծանուցման) պարզաբանումը, հրավերում (հրավերում՝ ծանուցման մեջ) փոփոխություն կատարելու, ռուսերենով և անգլերենով հրավերի տրամադրման, այդ թվում՝ գանձվող վճարի չափի հաշվարկման կարգը
4. Գրանցման հայտը ներկայացնելու կարգը և ժամկետները
5. Հնարավոր մասնակիցների գրանցումը և շրջանակային համաձայնագրերի կնքումը
6. Հայտերի ներկայացումը
7. Հայտերի բացումը և արդյունքների ամփոփումը
8. Պայմանագրի կնքումը
9. Պայմանագրի (կանխավճարի) ապահովումը
10. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը


ՄԱՍ II.

ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՅՏԵՐԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ


1. Ընդհանուր դրույթներ
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները և որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը
3. Հայտի գնային առաջարկը
4. Պատվիրատուին ներկայացվող հայտերը պատրաստելու կարգը
5. Հավելվածներ 1-10
6. Ցանկ մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերի

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն Գնումների աջակցման կենտրոն պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետև՝ Կենտրոն) կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պետության կամ համայնքների հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կամ համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների, պետության կամ համայնքի կամ պետական կամ համայնքային ոչ առևտրային կամ պետության կամ համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից ձևավորված միավորումների (միությունների), պետությունից կամ համայնքից կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից կամ պետական կամ համայնքային ոչ առևտրային կամ պետության կամ համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններից նվիրաբերության կարգով միջոցներ ստացած իրավաբանական անձանց՝ նվիրաբերության կարգով ստացված միջոցների հաշվին կատարվող գնումների մասով և հանրային կազմակերպությունների (այսուհետև՝ Պատվիրատու) անունից ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող արհեստական կառույցների պահպանման և շահագործման աշխատանքների ձեռքբերման նպատակով, ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/2 ծածկագրով անցկացվող շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ նաև Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Գնումների աջակցման կենտրոնի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ info@armeps.am

ՄԱՍ I

## 1. Գնման առարկայի բնութագիրը

Գնման առարկա է հանդիսանում «Գնումների մասին» ՀՀ Օրենքով պատվիրատուի հատուցմամբ՝ ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող արհեստական կառույցների պահպանման և շահագործման աշխատանքների ձեռքբերումը:

Շրջանակային համաձայնագրի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

## 2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը

2.1 Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝

1) որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով.

3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում՝

ա. ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ,

գ. որպես ընտրված մասնակից մեկ անգամից ավելի հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

դ. օրենքով նախատեսված կարգով մասնակցի առնչությամբ կայացվել է որոշում գնումների գործընթացում հակամրցակցային վարքագծի՝ հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար,

ե. երբ առկա է սույն մասի 3-րդ կետով նախատեսված հանգամանքը:

2.2 Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

### 3. Հրավերի (հրավերի՝ ծանուցման) պարզաբանումը, հրավերում (հրավերում՝ ծանուցման մեջ) փոփոխություն կատարելու, ռուսերենով և անգլերենով հրավերի տրամադրման, այդ թվում՝ գանձվող վճարի չափի հաշվարկման կարգը

3.1 Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցն իրավունք ունի Կենտրոնից պահանջել հրավերի պարզաբանում:

Սույն հրավերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար Մասնակիցը կարող է դիմել Կենտրոն՝ գրավոր ձևով:

3.2 Կենտրոնը պարզաբանումը տրամադրում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում: Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

3.4 Սույն մասի 3.1 – 3.3 կետերի համաձայն կատարվող գործողությունների և դրանց արդյունքների մասին կազմվում է արձանագրություն:

3.5 Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի(ծանուցման) պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

3.6 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

3.7 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն մասի 3.5 կետով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

3.8 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում (ծանուցման մեջ) կարող են կատարվել փոփոխություններ: Սույն ընթացակարգի դեպքում փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:

3.9 Հրավերում (ծանուցման մեջ) փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից:

3.10 Սույն մասի 3.5 - 3.9 կետերի համաձայն կատարվող գործողությունների և դրանց արդյունքների մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:

3.11 Փաստաթղթային ձևով հրավեր, հրավեր (ծանուցում) ստանալու համար Կենտրոնին, Պատվիրատուին ներկայացվում է գրավոր դիմում: Փաստաթղթային ձևով հրավեր, հրավեր (ծանուցում) ստանալու մասին դիմումի հետ միասին ներկայացվում է նաև հրավեր, հրավեր (ծանուցում) տրամադրելու համար պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող՝ բանկի կողմից տրված

փաստաթղթի պատճենը, եթե հայտարարությամբ փաստաթղթային ձևով հրավերի, հրավերի (ծանուցման) տրամադրման համար նախատեսված է վճար: Գումարի չափը նախատեսվում է գնման հայտարարությամբ: Կենտրոնը, Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի, հրավերի (ծանուցման) տրամադրումն այդպիսի պահանջ ստանալու օրը: Էլեկտրոնային ձևով հրավեր, հրավեր (ծանուցում) տրամադրելու պահանջի դեպքում Կենտրոնը, Պատվիրատուն ապահովում է հրավերի, հրավերի (ծանուցման)՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

3.12 Ռուսերենով կամ անգլերենով հրավեր, հրավեր (ծանուցում) ստանալու համար Կենտրոնին, Պատվիրատուին ներկայացվում է գրավոր դիմում և ռուսերենով կամ անգլերենով հրավեր, հրավեր (ծանուցում) տրամադրելու համար պահանջվող գումարի վճարված լինելը հավաստող՝ բանկի կողմից տրված փաստաթղթի պատճենը: Ռուսերենով կամ անգլերենով հրավեր, հրավեր (ծանուցում) տրամադրելու համար գանձվող գումարի չափը չի կարող գերազանցել հրավերի, հրավերի (ծանուցման) թարգմանության, տպագրման և առաքման համար կատարվող ծախսերի չափը: Այդ դեպքում Կենտրոնը, Պատվիրատուն ապահովում է հրավերի, հրավերի (ծանուցման) տրամադրումն այդպիսի պահանջ ստանալու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում: Կենտրոնի, Պատվիրատուի կողմից ռուսերենով կամ անգլերենով տրամադրված հրավերն, հրավերն (ծանուցումն) ունի նույն իրավական ուժը, ինչ որ հայերեն հրավերը, հրավերը (ծանուցումը): Ռուսերենով կամ անգլերենով հրավերի, հրավերի (ծանուցման) և հայերեն հրավերի, հրավերի (ծանուցման) տարբերության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

## 4. Գրանցման հայտը ներկայացնելու կարգը և ժամկետները

4.1 Գնումների հայտարարության և հրավերի հրապարակումից հետո, գնման գործընթացին մասնակցելու ցանկություն ունեցող անձը, որպես հնարավոր Մասնակից գրանցվելու նպատակով, Գնումների աջակցման կենտրոն է ներկայացնում գրանցման հայտ, որը ներառում է՝

1) գրավոր դիմում՝ հասցեագրված Գնումների աջակցման կենտրոնի ղեկավարին (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը,

2) Մասնակցի կողմից հաստատված գրավոր հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին (Հավելված N 2),

3) հրավերով սահմանված՝ որակավորման չափանիշներին իր հատկանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր (Հավելված N 3),

4) հայտի ապահովում՝ տուժանքի ձևով (Հավելված N 4), որի չափը հավասար է գնումների բազային միավորին /գնումների բազային միավոր՝ մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ/:

Մասնակիցը պարտավոր է շրջանակային համաձայնագիր կնքելուց հետո, օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և (կամ) հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր հատկանիշների փոփոխության (վատթարացման) դեպքում, Գնումների աջակցման կենտրոն ներկայացնել շրջանակային համաձայնագիրը դադարեցնելու մասին դիմում: Սույն ենթակետի պահանջները չկատարելու դեպքում՝

ա. Մասնակիցը պարտավոր է Գնումների աջակցման կենտրոնի համապատասխան ծանուցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս վճարել հայտի ապահովման չափով գումար, և՝

բ. Մասնակցի հետ կնքված շրջանակային համաձայնագիրը լուծվում է:

Գրանցման և պատվիրատուին ներկայացվող հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում՝ «Հայտերը պատրաստելու» հրահանգում:

4.2 Գրանցման հայտերը անհրաժեշտ է ներկայացնել Կենտրոնին աշխատանքային օրերին և ժամերին, ք. Երևան, Կոմիտասի 54/բ, 115 սենյակ հասցեով:

4.3 Կենտրոնը պատասխանատվություն չի կրում փոստով ուղարկված գրանցման հայտերի՝ որևէ կերպ վնասված ստանալու համար:

## 5. Հնարավոր մասնակիցների գրանցումը և շրջանակային համաձայնագրերի կնքումը

5.1 Մասնակիցները գրանցման հայտ կարող են ներկայացնել սույն հրավերով սահմանված կարգով:

5.2 Գրանցման հայտը գնահատում է քարտուղարը՝ հրավերով սահմանված կարգով:

5.3 Գրանցման հայտը գնումների աջակցման կենտրոն մուտքագրվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում, հրավերով սահմանված չափանիշներին՝

1) համապատասխանող մասնակցի հետ Գնումների աջակցման կենտրոնը կնքում է շրջանակային համաձայնագիր (Հավելված N 6) և մասնակիցը գրանցվում է շրջանակային համաձայնագրեր կնքած անձանց ցուցակում: Գնումների աջակցման կենտրոնը գրանցված Մասնակցին է տրամադրում էլեկտրոնային փոստի հասցե, որի միջոցով պետք է ապահովի շրջանակային համաձայնագրով նախատեսված տեղեկությունների շրջանառումը: Հիշյալ էլեկտրոնային հասցեն հանդիսանում է Մասնակցի կողմից նշված հասցեն.

2) չհամապատասխանող Մասնակցի գրանցումը մերժվում է, որի մասին Գնումների աջակցման կենտրոնը ծանուցում է գրանցման հայտ ներկայացրած մասնակցին՝ սպառիչ ձևով նշելով մերժման համար հիմք հանդիսացած բոլոր անհամապատասխանությունները:

5.4 Մերժման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունները շտկելու մտադրության դեպքում, Մասնակիցը գրանցման հայտ է ներկայացնում Գնումների աջակցման կենտրոն՝ սկզբնական գրանցումը մերժելու ծանուցման օրվան հաջորդող երեսուն օրացուցային օրվա ընթացքում: Կրկին ներկայացված գրանցման հայտը քարտուղարի կողմից գնահատվում է՝ դրանք ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում՝

1) կարող են ներկայացվել միայն այն փաստաթղթերը, որոնցում առկա են եղել անհամապատասխանություններ.

2) Մասնակիցը ներկայացնում է հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի ու հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր հատկանիշների համապատասխանության և գրանցումը մերժելու պահից հետո դրանց անփոփոխ մնալու մասին:

5.5 Կրկին ներկայացված գրանցման հայտը հրավերի պահանջներին՝

1) համապատասխանող գնահատվելու դեպքում, երկու աշխատանքային օրվա ընթացքում տվյալ Մասնակցի հետ կնքում է շրջանակային համաձայնագիր և Մասնակիցը գրանցվում է շրջանակային համաձայնագրեր կնքած անձանց ցուցակում.

2) չհամապատասխանող գնահատվելու դեպքում Մասնակցի գրանցումը մերժվում է, որի մասին, երկու աշխատանքային օրվա ընթացքում, Գնումների աջակցման կենտրոնը ծանուցում է գրանցման դիմում ներկայացրած Մասնակցին՝ սպառիչ ձևով նշելով մերժման համար հիմք հանդիսացած բոլոր անհամապատասխանությունները:

5.6 Սահմանված ժամկետում կրկին գրանցման հայտ չներկայացվելու կամ ներկայացված հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում, տվյալ Մասնակցի գրանցման գործընթացը դադարեցվում է: Մասնակիցը կարող է սույն հրավերի համաձայն գրանցման նոր հայտ ներկայացնել:

5.7 Շրջանակային համաձայնագիրը կնքելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Գնումների աջակցման կենտրոնը էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում շրջանակային համաձայնագիր կնքած Մասնակցի վերաբերյալ տվյալները և կնքված շրջանակային համաձայնագրի օրինակը:

## 6. Հայտերի ներկայացումը

6.1 Սույն ընթացակարգի շրջանակներում գնում կատարելու նպատակով պատվիրատուն շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր անձանց միաժամանակ ծանուցում է հայտ ներկայացնելու մասին (Հավելված N 7)՝ կցելով կնքվելիք պայմանագրի նախագիծը (օրինակելի ձևը համաձայն հավելված N 10-ի) և ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը: Հայտերը ներկայացվում են մինչև դրա համար սույն կետի 6.3 ենթակետով սահմանված ժամկետի ավարտը:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան սույն կետի 6.3 ենթակետով նշված օրը, ծանուցման մեջ նշված ժամը և հասցեով: Հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղարը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

Հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում՝ «Հայտերը պատրաստելու» հրահանգում:

Արգելվում է շրջանակային համաձայնագրեր կնքած միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

6.2 էլեկտրոնային եղանակով գնում կատարելու դեպքում կիրառվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու մասին» N 1916-Ն որոշմամբ սահմանված պահանջները, իսկ փաստաթղթային ձևով հայտը ներառում է շրջանակային համաձայնագիր կնքած անձի կողմից հաստատված՝

ա) գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը (Հավելված N 5),

բ) գնային առաջարկը (Հավելված N 5.1):

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

– նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

– նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

6.3 Շրջանակային համաձայնագիր կնքած Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Հայտը ներկայացվում է ծանուցվելու օրվան հաջորդող օրվանից հաշված յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

6.4 Մասնակիցը կարող է դադարեցնել շրջանակային համաձայնագիրը՝ դրա մասին գրավոր ծանուցելով Գնումների աջակցման կենտրոնին: Համաձայնագրի դադարեցումն ավտոմատ կերպով չի դադարեցնում համաձայնագրի հիման վրա նախկինում կնքված պայմանագրերը: Շրջանակային համաձայնագիրը դադարում է, դրա վերաբերյալ դիմումը գնումների աջակցման կենտրոն մուտքագրվելու օրվան հաջորդող տասներորդ աշխատանքային օրը:

## 7. Հայտերի բացումը և արդյունքների ամփոփումը

7.1 Հայտերը բացվում են ծանուցման մեջ նշված ժամկետին և վայրում:

Հայտերի բացման նիստում, որը պետք է համընկնի հրավերով (ծանուցմամբ) սահմանված հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին, գնումները համակարգողը տեղեկատվություն է հաղորդում հայտերի գրանցամատյանում կատարված գրառումների մասին, որից հետո հանձնաժողովը՝

ա. գնահատում է հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացվելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված ծրարները: Անհամապատասխանություն հայտնաբերվելու դեպքում գնահատող հանձնաժողովը մերժում է այդ հայտերը: Քարտուղարը նիստին

հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում մերժված հայտերը և նիստի արձանագրության պատճենը տրամադրում է մերժված հայտերը ներկայացրած մասնակիցներին,

բ. հրապարակում է բացված հայտերով ներկայացված գները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը: Պահանջի դեպքում հրապարակված գնային առաջարկների պատճեններն անհապաղ տրամադրվում են նման պահանջ ներկայացրած մասնակցին,

Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հրավերով (ծանուցմամբ) սահմանված փոխարժեքով,

գ. Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ հրապարակում է տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով (ծանուցմամբ) պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ, տեղեկություններ՝ յուրաքանչյուր Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով (ծանուցմամբ) սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին:

7.2 Հայտերի բացման նիստում հանձնաժողովի կողմից որոշվում և հայտարարվում են ընտրված և երկրորդ ու երրորդ տեղերը զբաղեցրած մասնակիցները: Հաղթողը՝ ընտրված Մասնակիցը, որոշվում է հրավերին (ծանուցման) համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, ընդ որում, հանձնաժողովի կողմից ընտրված և 2-րդ ու 3-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս՝ գնային առաջարկների համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 2-րդ մասի 3.3 կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

7.2.1 Հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի (ծանուցման) պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը և (կամ) վճարման պայմանների փոփոխությանը.

2) «Գնումների մասին» ՀՀ Օրենքով նախատեսված այլ դեպքերի:

7.3 Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե հրավերին (ծանուցմանը) համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ապա՝

1) Առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները).

2) հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար

գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, ընդ որում՝ սույն կետի համաձայն էլեկտրոնային եղանակով ծանուցման (հրավերի տրամադրման) դեպքում պարտադիր է Մասնակցի կողմից ծանուցման ստացման ավտոմատ եղանակով հետ հաստատումը, իսկ գրավոր տարբերակով ծանուցման (հրավերի տրամադրման) դեպքում ծանուցումն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հետադարձ ծանուցմամբ, կամ Մասնակցին հանձնվում է առձեռն՝ նշելով վերջինիս կողմից դրա ստացման ամսաթիվը: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

3) բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երրորդ աշխատանքային օրը

4) յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակացությունների համար, նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը.

5) բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները:

7.4 Հայտերի բացման նիստի ավարտից հետո հանձնաժողովի քարտուղարը կազմում է արձանագրություն, որն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա բոլոր անդամները:

Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը հայտերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն կետում նշված արձանագրությանը:

## 8. Պայմանագրի կնքումը

8.1 Պայմանագիր կնքվում է պատվիրատուի կողմից, հանձնաժողովի որոշման հիման վրա՝ հրավերի (ծանուցման) համաձայն ընտրված Մասնակցի հետ՝ շրջանակային համաձայնագրով նախատեսված կարգով: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

Ընդ որում բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուի հետ պայմանագիր կնքող անձը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում, աշխատանքի կատարման ժամկետը պետք է սահմանվի առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագիր կնքելու օրվանից:

8.2 Սույն ընթացակարգի ձևով գնում կատարելու դեպքում, մինչև պայմանագիր կնքելը, պատվիրատուն հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին: Այդ մասին կարող է հայտարարվել՝

1) արդյունքների ամփոփման նիստում՝ հանրային իրազեկման միջոցով, որին հրավիրվել են գնումների գործընթացի բոլոր մասնակիցները.

2) նման հայտարարությունը էլեկտրոնային ձևով կամ ֆաքսով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կարող է ուղարկվել գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին.

3) նման հայտարարությունը տեղադրվում է լիազորված մարմնի, իսկ հնարավորության դեպքում՝ նաև պատվիրատուի ինտերնետային կայքում:

8.3 Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

8.4 Անգործության ժամկետը գնումների բազային միավորի հիսնապատիկը գերազանցող գնումների դեպքում առնվազն 10 օրացուցային օր է, իսկ չգերազանցող գնումների դեպքում՝ առնվազն 5 օրացուցային օր:

8.5 Սույն մասի 8.4 կետով նախատեսված անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե՝

1) «Գնումների մասին» ՀՀ օրենքով չի պահանջվում պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակում.

2) միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

8.6 Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն մասի 8.4 կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կնքած պայմանագիրն առոչինչ է:

8.7 Գնման հետ կապված կողմերի՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են պայմանագրով:

8.8 Ընտրված մասնակիցը հայտարարվելուն հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը (օրինակելի ձևը համաձայն հավելված N 10-ի):

Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնման առարկայի առանձնահատկություններով պայմանավորված Պատվիրատուի կողմից կարող է հայտ ներկայացնելու հրավերով (ծանուցմամբ) Մասնակցին ներկայացնել սույն ընթացակարգի հրավերի N 10 հավելվածով սահմանված օրինակելի պայմանագրից տարբերվող այլ պայմանագիր:

8.9 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո հրավերով (ծանուցումով) նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը և Պատվիրատուին ներկայացնում պայմանագրի, իսկ պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Պայմանագիր կնքելու առաջարկ ստանալու, սակայն պայմանագիր չկնքելու դեպքում՝

ա. Մասնակիցը պարտավոր է Գնումների աջակցման կենտրոնի համապատասխան ծանուցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս վճարել հայտի ապահովման չափով գումար, և՝

բ. Մասնակցի հետ կնքված շրջանակային համաձայնագիրը լուծվում է:

8.10 Մինչև սույն հրավերի 8.9 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

## 9. Պայմանագրի /Կանխավճարի/ ապահովումը

9.1 Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հինգ օրացուցային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

9.2 Պայմանագրի կատարման ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի տասը տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով (Հավելված N 8):

9.3 Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը նախապես պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, երաշխիքի ձևով (օրինակելի ձևը ըստ Հավելված N 9-ի): Կանխավճարի մարման կարգը սահմանված է պայմանագրի նախագծով:

9.4 Եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, ապա պայմանագրի և (կամ) կանխավճարի ապահովումը վերադարձվում է այն ներկայացնողին պայմանագրի կատարման ավարտից հետո ոչ ուշ, քան հինգ օրացուցային օրվա ընթացքում:

9.5 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

9.6 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

9.7 Շինարարական աշխատանքների գնման դեպքում կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի

Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև պայմանագրի կատարման արդյունքը ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարումը:

## 10. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

10.1 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

10.2 Գնումների, այդ թվում բողոքարկումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

10.3 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ Օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին՝ դիմում ներկայացնելով՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին աշխատանքային օրերին և ժամերին, ք. Երևան, Կոմիտասի 54/բ, 115 սենյակ հասցեով,

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և հանձնաժողովի որոշումները:

10.4 Խորհրդին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

1) բողոքը ներկայացրած անձի անունը (անվանումը) և հասցեն.
2) պատվիրատուի անվանումը և հասցեն.
3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.
4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.
5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը, ընդ որում՝ բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար դրամ, որը պետք է փոխանցվի «Հայէկոնոմբանկի Արաբկիրի» մ/ճ, Հ/Հ 163058100971 «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվեհամարին.

7) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

10.5 Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

10.6 Եթե բողոքը չի բավարարում «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 48-րդ հոդվածի պահանջներին, ապա գնումների աջակցման կենտրոնը խորհրդի անունից այդ մասին տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու հնգօրյա ժամկետ:

10.7 Բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա գտնվելու խորհրդի նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

10.8 Բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան քսան օրացուցային օրվա ընթացքում: Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

10.9 Խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝

1) որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ գնումների ընթացակարգը կամ պատվիրատուի, հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ.

2) դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը.

3) չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը՝

ա. եթե պատվիրատուն պայմանագիրը կնքել է առանց «Գնումների մասին» ՀՀ Օրենքի պահանջների համաձայն պայմանագրի մասին ծանուցում հրապարակելու,

բ. «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 9-րդ հոդվածի կամ սույն մասի 10.17 կետի պահանջները խախտելու դեպքում, եթե նման խախտումը զրկել է շահագրգիռ մասնակցին նախքան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից, և եթե նման խախտումը համադրված է պետական գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ, և եթե վերջին խախտումն ազդել է պայմանագիր կնքելու շահագրգիռ մասնակցի հնարավորությունների վրա.

4) եթե, սույն մասի 10.9 կետի 3)-րդ ենթակետի պահանջներին հակառակ, հանձնաժողովը բոլոր համապատասխան փաստերը քննելուց հետո գտնում է, որ ընդհանուր գերակա շահերը պահանջում են ուժի մեջ թողնել պայմանագիրը, ապա կիրառում է այլընտրանքային պատժամիջոցներ՝

ա. պայմանագրի կատարման սահմանափակումը՝ դրա կատարման ժամկետը կրճատելու միջոցով, և (կամ)

բ. պատվիրատուի հանդեպ պայմանագրի գնի առավելագույնը 10 տոկոսի չափով տուժանքի կիրառում.

5) բոլոր այն դեպքերում, երբ սույն մասի 10.9 կետի 3-րդ ենթակետով նախատեսված չեղյալ հայտարարելու պատժամիջոցը չի կարող ունենալ հետադարձ ուժ (քանի որ անհնար է վերացնել կատարված պայմանագրային պարտավորությունները), հանձնաժողովը, ի հավելումն, կիրառում է սույն մասի 10.9 կետի 4-րդ ենթակետի «ա» մասով նախատեսված պատժամիջոցը.

6) հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո: Նման որոշումը հիմք է հանդիսանում դատական կարգով ներկայացվելիք վնասի փոխհատուցման հայցի համար.

7) որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

10.10 Գնումների բողոքարկման խորհրդի կողմից բողոքը բավարարվելու դեպքում պատվիրատուն պատասխանատվություն է կրում բողոքը ներկայացրած անձին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասի հատուցման համար:

10.11 Բողոքի բանավոր քննությունը բաց է հանրության համար և բողոքը ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում այդ մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:

10.12 Յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք: «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 48-րդ հոդվածի համաձայն բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

10.13 Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն այն կայացնելու օրվանից՝ 5 օրացուցային օրվա ընթացքում, հրապարակվում է տեղեկագրում և ուղարկվում է պատվիրատուին, լիազորված մարմին ու բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերին:

10.14 Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել պատվիրատուի, հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կատարած խախտման հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

10.15 Խորհուրդը կայացնում է բողոքը ներկայացրած անձի պահանջած ժամանակավոր միջոցը կիրառելու մասին որոշում, եթե նման միջոցը պատշաճ և անհրաժեշտ է ակնկալվող վնասը մինչև բողոքի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը կանխելու համար:

10.16 Խորհուրդը հաշվի է առնում ժամանակավոր միջոցի հնարավոր հետևանքները բոլոր այն շահերի, այդ թվում՝ հանրային շահի համար, որոնք կրելու են վնասներ, և կարող է կայացնել նման միջոց չկիրառելու մասին որոշում, եթե դրա բացասական հետևանքները կարող են գերազանցել օգուտը: Ժամանակավոր միջոց չկիրառելու մասին որոշումը չի կարող ազդել նման միջոցի դիմած անձի որևէ այլ հայցի վրա:

10.17 Բողոքը ինքնաբերաբար չի կասեցնում պայմանագրի կնքման ընթացակարգը, սակայն մինչև խորհրդի կողմից սույն հրավերի 10.15-րդ կամ 10.16-րդ կետերով նախատեսված որոշման ընդունումը պատվիրատուն իրավունք չունի պայմանագիր կնքելու:

## ՄԱՍ II

## ՀՐԱՀԱՆԳ
## ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՅՏԵՐԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ

### 1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել Մասնակիցներին գրանցման և պատվիրատուին ներկայացվող հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Գրանցման և /կամ/ պատվիրատուին ներկայացվող հայտում ներառվող բոլոր փաստաթղթերը պետք է կազմված լինեն հայերեն, բացառությամբ՝ տրանսպորտային միջոցների, տեխնիկական միջոցների, սարքերի, սարքավորումների վերաբերյալ փաստաթղթերը, վարորդական իրավունքի վկայագրերը, որոնք տրամադրվել են խորհրդային ժամանակաշրջանում կամ հետխորհրդային ժամանակաշրջանում՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից, կարող են կազմված լինել ռուսերեն լեզվով, եթե դրանք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ուժը կորցրած չեն ճանաչվել (համարվել):

Գնումների բազային միավորի հիսնապատիկը գերազանցող գնումների դեպքում, հրավերով (ծանուցումով) նախատեսված դեպքերում, հայտերը հայերենից բացի կարող են ներկայացվել նաև անգլերեն և (կամ) ռուսերեն:

### 2. Գրանցման հայտը և Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները և որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը

2.1 Գնման գործընթացին մասնակցելու ցանկություն ունեցող անձը, որպես հնարավոր Մասնակից գրանցվելու նպատակով, Գնումների աջակցման կենտրոն է ներկայացնում գրանցման հայտ, որը ներառում է՝

2.1.1 գրավոր դիմում՝ հասցեագրված Գնումների աջակցման կենտրոնի ղեկավարին (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

2.1.2 հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարություն, իր իսկ կողմից հաստատված՝ ստորագրված և կնքված այն մասին, որ՝

1) Մասնակիցը դատական կարգով սնանկ ճանաչված չէ.

2) Մասնակիցը չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով.

3) Մասնակցի գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) Մասնակիցը ներառված չի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

5) Մասնակիցը չունի գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

Նշված հայտարարության առաջարկվող ձևը և դրա նկատմամբ առաջադրվող պահանջները ներկայացված են սույն հրավերի N 2 հավելվածում,

Եթե մասնակիցը հայտով ներկայացրել է սույն հրավերի 2.1.2 կետով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին: Բացի հայտարարությունից, 2.1.2 կետով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապացուցվել է մասնակցի՝ գնումների գործընթացում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման դրսևորման փաստը, ապա տվյալ մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.1.3 հրավերով սահմանված՝ որակավորման չափանիշներին իր հատկանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի մասին հայտարարություն (Հավելված N 3), իր իսկ կողմից հաստատված՝ ստորագրված և կնքված այն մասին, որ ունի շրջանակային համաձայնագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

2.1.4 հայտի ապահովում՝ տուժանքի ձևով, որի չափը հավասար է գնումների բազային միավորին (Հավելված N 4),

2.2 Պայմանագրերը կարող են իրականացվել գործակալության կամ ենթակապալի պայմանագրեր կնքելու միջոցով: Գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված Մասնակիցը: Եթե գործակալության կամ ենթակապալի միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է նաև գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տվյալները),

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ հանդիսացող անձի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության համար սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

3) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի կամ ենթակապալառուի փոփոխությունն իրականացվում է պատվիրատուի համաձայնությամբ:

4) Մասնակիցն է պատասխանատվություն կրում գործակալի կամ ենթակապալառուի պարտավարությունների համար:

2.3 Մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

3) Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն.

4) կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

2.4 Գրանցման և/կամ/ պատվիրատուին ներկայացվող հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

### 3. Հայտի գնային առաջարկը

3.1 Առաջարկվող գինը ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի ընթացակարգի հայտով.

Մասնակցի գնային առաջարկը, որը ներառում է նաև ինքնարժեքի հաշվարկը, ներկայացվում է ինքնարժեք, շահույթ և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով (Հավելված N 5.1): Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

3.2 Հայտի գինը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության դրամով:

3.3 Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա մասնակցի ներկայացրած գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի չափը: Ընդ որում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված համաձայնագրերով (պայմանագրերով) նախատեսված դեպքերի մասնակցի (մասնակիցների) գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

### 4. Պատվիրատուին ներկայացվող հայտերը պատրաստելու կարգը

4.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Հայտը ներկայացվում է փակ՝ սոսնձված ծրարով, որի վրա կատարվում են 4.2 կետով նշված գրառումները: Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում և կնքվում է (եթե կիրառելի է) այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը, կազմվում են

բնօրինակից և 2 օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ Մասնակցի կազմած փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

4.2 Սույն հրահանգի 4.1 կետում նշված ծրարի վրա ընթացակարգի հայտը կազմելու լեզվով նշվում են՝

ա) «Գնային առաջարկ» բառերը,

բ) ընթացակարգի ծածկագիրը.

գ) «Չբացել մինչև գնային առաջարկների բացման նիստը» բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը,

ե) պատվիրատուի անվանումը և ընթացակարգի հայտի ներկայացման վայրը (հասցեն):

4.3 Սույն հրահանգի 4.1 և 4.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին: